

Նվեր Սիմոնյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ ԵՎ ՀԵՏՈ

Բանալի բառեր – Հայկական հարց, պանիսլամիզմ, Թուրան, երիտթուրքեր, պանթուրքիզմ, Անտանտ, «միլլի», «Ազգային օջախ»:

19-րդ դարի վերջերին պանիսլամիզմի կողմնակիցները հայտարարում էին. «Եթե հաջողվի համախմբել Ասիայի, Աֆրիկայի և Եվրոպայի մահմեդականներին, մենք, անկասկած, կդառնանք աշխարհի վրա գերիշխող ազգություն»¹: Հայ ժողովրդին ոչնչացնելու ծրագրի իրագործումը նրանք սկսեցին հայկական հուշարձանները վերացնելուց, ինչի մասին մեզ արժեքավոր տեղեկություն է հաղորդել 1869թ. Կ. Պոլսում գտնվող ռուսական դեսպան Իգնատևը. «Բ Դուռը գաղտնի հրահանգ է ուղարկել տեղական իշխանություններին՝ անխնա կերպով ոչնչացնել հայկական պատմական բոլոր հուշարձանները, որպեսզի նրանք չհիշեցնեն Հայաստանի անցյալը և չզարթնեցնեն ազգային անկախության գաղափարը հայ ժողովրդի մեջ»²: Նոր իշխանության եկած երիտթուրքերը դարձան իրենց նախորդի՝ Աբդուլ Համիդի հայաջինջ քաղաքականության շարունակողները, որի ճիշտ բնութագիրը տվել է հայտնի ռուս միջազգայնագետ Անդրեյ Մանդելշտամը. «Հին ու նոր թուրքական կարգերը միավորվում էին միևնույն ատելության մեջ հայերի նկատմամբ»³: Այսպես Հայկական հարցը արևմտահայերի բնաջնջման ճանապարհով լուծելու համիդյան քաղաքականությունը (ինչի արդյունքում 1894-1896թթ. զոհ գնաց ավելի քան 300.000 հայ) փոխանցվեց երիտթուրքերին: Երիտթուրքերը, գալով իշխանության, սկսեցին քննադատել օսմանիզմը, քանի որ այն «Օսմանյան կայսրությունում նվաճված ժողովուրդների ծուլման, դանդաղ ոչնչացման ծրագիր է»⁴: Հետագայում նրանք որդեգրեցին պանթուրքիզմը և ըստ իրենց՝ կայսրության սահմանները պետք է տարածվեին «Զիբրալթարից մինչև Չինաստան և պետք է ընդգրկեին Ռուսաստանի կազմում գտնվող Կովկասը, Դրիմը, Մերձվոլգյան երկրամասերը, Միջին Ասիան, ինչպես նաև Իրանի մեծ մասը, Աֆղանստանը, Չինաստանի և Հնդկաստանի մի մասը»⁵:

¹ Ազատ Համբարյան, Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979, էջ 18:

² Մկրտիչ Ներսիսյան, Հայ ազատագրական պայքարը թուրքական բռնազավթիչների դեմ, 1850-1870թթ. Երևան, 1955թ. էջ 79:

³ Ռուբեն Սահակյան, Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990թ., էջ 6:

⁴ Լենդրուշ Խուրշուդյան, Հայոց ազգային գաղափարախոսություն, Երևան, 1999թ., էջ 52:

⁵ Տես՝ Հայոց ցեղասպանություն, Պ.Հովհաննիսյանի խմբագրությամբ, Երևան, 2001թ. էջ 110:

Այս ամենին հասնելու համար իրենց մամուլում կոչ էին անում «աշխատել թուրքերի օգտին, մեծ Թուրանի ստեղծումը պետք է կատարվի հրով ու սրով»¹: Սակայն երիտթուրքերը իրենց դիրքերը հայերի շրջանում ամրապնդելու նպատակով սկսեցին շողոքորթաբար մեղմացնել գործող քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում: Հայերի և երիտթուրքերի հարաբերությունների մասին գրել է նաև Միքայել Վարանդյանը. «1895-1896 թուականներուն մեր ընկերները կենդանի յարաբերութեան մէջ էին ժընելի մեջ հաստատուած երիտասարդ թուրքերուն հետ»²: Այսպիսով, երիտթուրքական կազմակերպությունները փորձում էին մերձենալ ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում հայերի և Հ.Յ.Ղաշնակցության հետ: Փաստորեն, հայ ազատագրական ուժերը Աբդուլ Համիդին ընդդիմադիր ուժերի հետ համատեղ պայքարի մեջ էին մտնում իշխող վարչակարգը տապալելու և կայսրությունում սահմանադրական կարգեր հաստատելու համար³: Նրանք Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներում կազմակերպում էին մահմեդականների և քրիստոնյաների եղբայրացում և 1908 թ. ամռանը Բիթլիսում քրիստոնյաների ու մահմեդականների միտինգում փառաբանվում էին հայ ֆիդայիները, ապա հայերը, թուրքերն ու քրդերը պսակ էին դնում Աղբյուր Սերոբի գերեզմանին⁴:

1908 թ. երիտթուրքերի հեղաշրջումը շատ հայերի կողմից սկզբում ողջունվեց, բայց շուտով նրանց հույսերը խորտակվեցին: 1909թ. մոտ 30.000 հայեր սրի քաշվեցին Կիլիկյան Հայաստանում, «թեև,- գրում է Արմին Վեգները,- Կ.Պոլսի կենտրոնական կառավարությունը, հնարավոր է, ուղղակի կերպով մասնակից չէր այս նոր հանցագործությանը, հայերն այսուհետև այլևս դադարեցին հավատալ երիտթուրքերին»⁵: Երիտթուրքերը, ըստ Սիմոն Վրացյանի, «ոչ միայն չզնահատեցին հայ ժողովրդի այս անկեղծ զգացմունքները, ոչ միայն չաշխատեցին նրա մեջ խորացնելու և ամրացնելու օսմանյան պետականության գաղափարը, այլև, կարծես դիտավորյալ կերպով, թափեցին ամեն ճիգ ու ջանք՝ սառեցնելու համար հայերի նման վերաբերմունքը»⁶:

Ադանայի դեպքերի կապակցությամբ իթթիհատի կողմից հաւաստիացումներ եղան, որ այլևս նման դեպքեր տեղի չեն ունենա, որ հանցավորները հետադիմականներն էին եւ այլն, ընդառաջեցին Ղաշնակցութեան պահանջներին եւ խախտուած հարաբերությունները վերականգնեցին: Սակայն, այդպես լինելով հանդերձ՝ ոչ ոքի մտքով չէր անցնում, որ Իթթիհատի ղեկավարությունը կարող

¹ Ա.Համբարյան. նշվ.աշխ. էջ 19

² Միքայել Վարանդեան, Հ.Յ.Ղաշնակցութեան պատմութիւն, Երևան, 1992թ. էջ 422

³ Տե՛ս, Հայոց պատմություն, բուհական դասագիրք, Երևան.2012 .էջ 434

⁴ Տե՛ս, Ա.Համբարյան. նշվ.աշխ. էջ 21:

⁵ Ռ.Սահակյան. նշվ.աշխ. էջ 39:

⁶ Սիմոն Վրացյան , Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993 թ. էջ 4:

էր հղանալ և իրագործել հայ ամբողջ ժողովրդի ոչնչացումը¹:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Իթաիհատի կուսակցության երկու պարագլուխներ՝ Բեհաեդդին Շաքիրը և Նաճի բեյը երգրում են գալիս և առաջարկում են դաշնակցական ղեկավարներին հետևյալ պահանջները. «ա) Հայկական կամաւորական գունդեր կազմել եւ կըռուիլ Ռուսերուն դէմ. բ) Անդրկովկասի մէջ հակառուսական աշխատանք տանիլ և ապստամբութիւն առաջացնել ռուսական բանակի թիկունքին. գ) Արտասահմանի մէջ եւս միացեալ ձակատ կազմել եւ գործակցիլ թուրքերուն»²: Բացի դրանից նրանք այլ առաջարկություններ էլ արեցին, ինչի մասին մեզ հաղորդել է Ռուբենը : Նրանք առաջարկում են ստեղծել Հայաստան կենդրոն ունենալով Էջմիածինը, միացնելով դրան Տաճկահայաստանի որոշ մասեր³: Թուրք պարագլուխներին դաշնակցական ղեկավարները պատասխանեցին հետևյալ կերպ. «Հայութիւնը լրիւ կերպով պիտի կատարեր իր զինուորական եւ քաղաքացիական պարտականութիւնները, Օսմանեան բանակին եւ հայրենիքին բերելով իր ծառայութիւնը, իսկ ինչ կը վերաբերեր կովկասահայութեանը, դաշնակցութիւնը չէր կրնար անոնց անուճով պատասխանատվութիւն վերցնել, քանի-որ վերջին հինգ տարիներուն հայկական հարցին հանդէպ իրենց բռնած բացասական կեցուածքով կովկասահայութեան համակրանքը շահուած ըլլալու ոչ մէկ իրաւունք ունէին»⁴:

Ինչպես նկատեցինք, հայերը համաձայնեցին զինվորագրվելու թուրքական բանակին: Վերոհիշյալ փաստի առնչությամբ կարող ենք մեջ բերել ևս մեկ համոզիչ փաստ Մարգվանի ջարդերի ականատես Վ. Միրազեանցի վկայությունից. «Հայ կուսակցությունները հրապարակավ հայ ժողովուրդը քաջալերեցին կատարելու իրենց քաղաքացիական պարտականությունը և հավատարմությամբ համապատասխանելու թուրք կառավարության ըրած կոչերուն»⁵: Այս ամենից կարելի է գալ այն ճիշտ եզրահանգման, որ թուրք որոշ պատմաբաններ փորձում են խեղաթյուրել պատմության ճշմարտացիությունը և Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցող ոճրագործության պատասխանատվությունից խուսափելու համար հայերին մեղադրել ապստամբության մեջ, ինչը իրականությանը չի համապատասխանում: Թուրք պատմաբան պրոֆեսոր Յուսուֆ Հիքմեթ Բայուրը իր «Թրքական հեղափոխության պատմությունը» վերնագրով բազմահատոր աշխատության մեջ գրում է. «Երիտթուրքական կառավարության կողմից ձեռնարկված «պատժիչ»

¹ Տե՛ս Արամը, մահուան յիսնամեակին առթիվ, Երևան, 1993 էջ 66:

² Արշավիր Շիրակյան, Կտակն էր նահատակներուն, Երևան, 1991 էջ 32:

³ Տես՝ Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7. Թեհրան, 1982, էջ 172:

⁴ Ա.Շիրակյան, նշվ.աշխ., էջ 33:

⁵ Ջոն Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Երևան, 1967 էջ 277:

միջոցառումները սոսկ հետևանք էին հայկական վիլայեթներում ծագած ապստամբությունների»¹: Բայուրի հայտարարությանը իրավացիորեն հակադրվում է ֆրանսիացի պատմաբան Էլենա դը լա Սուշեռը և հանգամանորեն վեր է հանում ու քննադատում 1894-1918 թթ. համիդյան և երիտթուրքական բռնազավթիչների ոճրագործությունները հայերի նկատմամբ. «Երիտթուրքերը շարունակեցին Աբդուլ Համիդի անավարտ գործը լավ մշակված մեթոդով»²:

Թուրքական բանակում՝ ծառայող հայ զինվորներին ծառայության ժամանակ լծում էին բացառապես ծանր աշխատանքների, և լինում էին հայ զինվորների զանգվածային գնդակահարությունների մշտական դեպքեր³: Այս ծանր պայմաններում նկատվում են դասալքության դեպքեր. անչափ ուշագրավ է Լիման ֆոն Սանդերսի տեղեկությունը. «1915 թվականի հունիսին Կարինի շրջանում մասսայականորեն դասալքում էին հենց թուրք զինվորները, որ նրանց թիվը 1916 թվականին հասել է մինչև 30 հազարի, իսկ 1918 թվականին թուրքական բանակում արդեն ավելի շատ դասալիքներ կային, քան զինվորներ»⁴: Փաստորեն, կարելի է եզրակացնել, որ դասալքությունը մեծ չափերի էր հասնում թուրքական բանակում, և դա այն դեպքում, որ այդ քայլին դիմում էին հենց իրենք՝ թուրքերը: Իսկ հայերի կողմից դասալքությունը միայն պատրվակ էր. նպատակն էր՝ ոչնչացնել զորահավաքի ենթարկված հայկական զինված ուժը: Իթթիհատական կառավարությունը ետ կանչեց հայ մարտիկներին պատերազմի առաջին գծերից, թիկունք տանելով՝ զինաթափեց և երբ որ հայ զինվորը մնաց առանց զենքի, հավաքեց ճամբարների մեջ և գնդակահարեց»⁵: Ջարմանալու ոչինչ չկար հայերի իսպառ բնաջնջումը նախօրոք մշակված և կանխամտածված էր: Դա երևում էր նրանց հայտարարություններում, մասնավորապես Նուրի բեյին ուղղված հրամանագրում. «Դարերէ ի վեր պետության ամուր հիմք քանդելու բաղձացող և կառավարութեան համար կարելոր փորձանքի մը երեւոյթը առած հայ տարրին ջնջումը թէւ նախապես մտադրուած էր, բայց ժամանակին ստիպումները այս սրբազան մտադրութիւնը իրականացնելու կարելիութիւն չէին ընծայեր: Հիմայ, բոլոր արգելքները վերցած եւ հայրենիքը այս վնասակար տարրեն փրկելու ժամանակը հասած»⁶: Անշուշտ, նրանք նկատի ունեին Առաջին համաշխարհային պատերազմը, քանի որ նրանց քիչ թե շատ սաստող պետությունները պատերազմի մեջ էին գտնվում: 1915 թ. փետրվարին կայացած գաղտնի նիստում համանման

¹ Ռ. Սահակյան նշվ. աշխ. էջ 16:

² նույն տեղում էջ 20:

³ Ջ. Կիրակոսյան, նշվ. աշխ. էջ 264:

⁴ նույն տեղում էջ 26:

⁵ նույն տեղում. էջ 273:

⁶ Արամ Անտոնյան, «Մեծ ոճիր», Բոստոն, 1921 թ. էջ 26:

հայտարարությամբ հանդես եկավ դոկ. Նազընը. «հիմա պատերազմի մէջ ենք, ասկէ հարմար առիթ չի գտնվիր Մեծ պետությանց միջամտությանը և թերթերու բողոքի ձայնը նկատելի իսկ չի կրնար ըլլալ. ըլլալու պարագային խնդիրը կատարված իրողություն մը կդառնա և կփակվի»¹: Ինչ խոսք, թուրքերը իրենց պանթուրքական նվաճողական պլանների իրագործմանը հասնելու որպէս պատեհ առիթ օգտագործեցին Առաջին համաշխարհային պատերազմը, և ըստ իրենց հաշվարկների Հայաստանը միակ արգելքն էր, որ պետք է վերացնէին:

Վերջապէս չպետք է անտեսել, որ թուրքերը պանթուրքական ծրագրերին հաջող ընթացք տալու համար անդամագրվեցին գերմանա-ավստրո-հունգարական խմբավորմանը: Անչափ ուշագրավ են գերմանացիների գործողությունները նախապատերազմյան շրջանում. նրանք մահմեդականներին՝ թուրքերին և արաբներին, իրենց կողմը գրավելու համար դիմում էին տարբեր միջոցների, որոնց անդրադարձել է Արամ Անտոնյանը. «գերման սպանէր արաբական տարագով հանդիսութիւններ կը սարքէին Հալէպի մէջ եւ ամբողջ Պաղտատի գիծին վրայ, բեմեր կը յարդարէին՝ որոնց ճակատը խոշոր գրերով կ'երեւար «Gott strate England» (Աստուած պատժէ Անգլիան)»²: Գերման սպաները նույն կերպ վարվեցին նաև Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին համաձայն այն վարկածի, «թե՛ Հիտլերը ի նշան մուսուլման ժողովուրդների նկատմամբ տածած մեծ հարգանքի, ընդունել է իսլամ և իրեն անվանել Հեյդար: Այդ վարկածը հաստատելու նպատակով գերմանական գեներալներից ոմանք Հյուսիսային Կովկասում հաճախում էին մուսուլմանական մզկիթներ և աղոթում ավլախին»³: Մինչև անգամ 1915թ. հուլիսի 4-ին թուրքական կառավարությանն ուղղված մի գաղտնի գրության մէջ կարդում ենք, որ «Գերմանիան լիովին հավանություն է տվել և պաշտպանել երիտթուրքերի հայաջինջ ծրագիրը: Գերմանական հյուպատոսները խրախուսել, իսկ գերմանացի սպաները մասնակցել են երիտթուրքերի վայրագություններին»⁴:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արևմտյան Հայաստանում զանգվածային ջարդերի և տեղահանությունների ժամանակ գործի է դրվել նաև հայերի բռնի մահմեդականացման ծրագիրը, ինչը մեծ խանդավառություն առաջացրեց թուրքական շրջաններում: Դրան նպաստել է Խալիտէ Էտիպ հանրմ կոչվածը, որը 1919 թ. մեծ ծավալի աշխատանք է տարել թուրք-ամերիկյան հարաբերությունների կայացման գործում և խոչընդոտել ԱՄՆ-ի կողմից Հայաստանի հնարավոր «խնամակալությունը»: Հանուն արդարության պետք է

¹ Ռ.Սահակյան, նշվ. աշխ., էջ 14:

² Ա.Անտոնյան, նշվ. Աշխ., էջ 74:

³ Հրաչիկ Սիմոնյան, Թուրք-հայկական հարբերությունների պատմությունից, Երևան 1991 էջ 513-514:

⁴ Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Երևան, 1988, էջ 10:

նշել, որ 1915 թ. մայիսի 24-ի դրությամբ դաշնակից երկրները «հաւաքական ազդարարութիւն մը կատարեցին՝ պահանջելով դադարեցնել կոտորածները, այլապէս թրքական կառավարության բոլոր անդամները անձնապէս պատասխանատու պիտի համարուէին»¹:

Ի դեպ, կարելի է արձանագրել, որ դաշնակից ուժերը արդէն իսկ 1915 թ. ճանաչել էին հայերի ջարդերը: Դաշնակիցները առանձին-առանձին սպառնացին Թուրքիային: Մասնավորապէս մեջ ենք բերում 1916թ. օգոստոսի 20-ի Նիկոլայ 2-րդ ցարի հայտարարությունը. «Թուրքիային պետք է վերջ տրվի: Բոլոր դեպքերում Եվրոպայում այլևս նրա համար տեղ չկա»²: Ուշագրավ է նաև Լյոյդ Ջորջի (Անգլիայի վարչապետ 1916-1922թթ.) ճառը. «Թուրքիայի բոլոր ճնշուած ժողովուրդները պետք է փրկուին այդ թշուառ հարկատու երկիրին լուծեն: Հայաստանը ինչպէս ամէն ուրիշներ, պէտք է տեսնե ժողովուրդներու անկախութեան գործադրութիւնը: Անհատական դավաճանութիւնները անգամ մըն ալ կ'ապացուցանեն, որ իւրաքանչիւր ժողովուրդ պետք է ապրի ինքն իր մեջ, իր հայրենիքին մեջ, ինքն իրմով, որպէսզի խաղաղութիւն վայելէ: Հայերը պետք է վերագտնեն իրենց անկախութիւնը»³:

Շուտով պատմությունն այլ ընթացք ստացավ. Ռուսաստանը 1917թ. Հոկտեմբերյան հեղափոխության պատճառով դուրս եկավ պատերազմից (մինչ այդ գտնվում էր Անտանտի կազմում), իսկ 1918 թ. հոկտեմբերի 30-ին զինադադար կնքվեց Անտանտի և Թուրքիայի միջև Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում կանգնած բրիտանական «Ագամեմնոն» նավի վրա և ստորագրվեց 25 հոդված: Տեղին ենք համարում մեջ բերել միայն հայերին վերաբերող հոդվածները: «Հոդված 4. հայ ռազմագերիները և ներկալվածները պետք է ժողովեն Կ.Պոլսում, որպէսզի առանց որևէ պայմանների հանձնվեն դաշնակիցներին: Հոդված 11. Կշարունակվի թուրքական զորքերի անհապաղ նահանջը դեպի Պարսկաստանի հյուսիս-արևմուտք՝ մինչև պատերազմական սահմանագծից այս կողմ: Թուրքական զորքերը արդէն ստացել են Անդրկովկասի մի մասը էվակուացնելու հրաման:

Հոդված 16. Թուրքական զորքերի դուրս բերում Կիլիկիայից: **Հոդված 24.** Հայկական վիլայեթներից որևէ մեկում անկարգություններ ծագելու դեպքում դաշնակիցները իրենց վերապահում են նրա մի մասը գրավելու իրավունք»⁴: Բարձր խոստումներ հնչեցնողները զինադադարից անմիջապէս հետո դադարեցին

¹ Ա. Շիրակեան, նշվ. աշխ., էջ 63:

² Գալուստ Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999., էջ 58:

³ Յոյտ Ճօրճի հռչակաւոր ճառը եւ Հայկական խնդիրը անգլիական խորհրդարանին մեջ, (թարգմանությամբ Ենովք Արմենի), Կ.Պոլիս, 1919 , էջ 6:

⁴ Հենրիկ Ագաոյան, Բախտորոշ պայմանագրեր, Երևան, 2002, էջ 91-93:

խոսել հայերի օգտին: Վերոհիշյալ հողվածներից և ոչ մեկում, ցավոք, չի հիշատակվում 1915-1916 թվականների ցեղասպանությունը:

Հայաթափելով Արևմտյան Հայաստանը՝ թուրքերը պատասխանատվության չենթարկվեցին, դեռ ավելին, նրանք դաշնակիցներին սկսեցին հասկացնել, որ եթե «ծեզ հալալ է Հնդկաստանը, ամբողջ Աֆրիկան, Արևելքում և այլուր նվաճված ու ստրկացված շատ երկրներ ու ժողովուրդները, ապա թուրքերին էլ թույլ տվեք, որ քաղցկեղով հիվանդ իր ստամոքսով մարսի ամայացված Հայաստանը, թեկուզև առանց հայերի, որոնց հաշիվն էլ մաքրված է թուրքական եղանակով»¹:

Պատերազմի ավարտից հետո՝ 1919թ. մարտի 8-ին սուլթան Մեհմեդ 6-րդ Վահիդեդդինի (1918-1922թթ.) հրամանագրով, երիտթուրքական կուսակցական պարագլուխներն ու մինիստրները հանձնվում են Կ.Պոլսի ռազմական արտակարգ ատյանի քննությանը²: Թվում էր, թե երիտթուրք պարագլուխները պետք է պատժվեին: Նրանց մի մասին սկզբում, իբր թե հայ վրիժառուներից հեռու պահելու և ավելի ապահով պայմաններում դատավարելու համար, տեղափոխեցին Մալթա, պայմանով, որ Գերմանիայում և այլ վայրերում ապաստանած իթթիհատականներին ևս տեղափոխելու են Մալթա: Բայց պարզվեց հետևյալը, որ ոճրագործներին Մալթա փոխադրելով՝ դաշնակիցները նպատակ չունեին նրանց պատժել, այլ ընդհակառակը՝ պաշտպանել հայերի վրեժխնդրությունից: Հետագայում հայտնի դարձավ, որ Անգլիան ոճրագործներին պահում էր՝ փոխանակելու Թուրքիայում մնացած Անգլիայի գերիների հետ³: Այստեղ ի հայտ է գալիս Անգլիայի երկերեսանիությունը և առհասարակ դաշնակիցների տատանվողականությունը հայոց ցեղասպանության հարցում: «Մալթայի մեջ այդ աքսորականները կերան, խմեցին, հղիացան և մեկ-մեկ գործիքներ դարձան Անգլիայի ձեռքում անոր քաղաքական և տնտեսական շահերը ապահովելու համար Թուրքիոյ մեջ: Մալթան արդարության օջախը չհանդիսացավ: Մալթան ամոթի և նախատինքի համազոր թատերաբեմը եղավ միայն»⁴: Այդ ոճրագործները իրենց արժանի պատիժը ստացան դաշնակցական մի խումբ հայ վրիժառուների կողմից 1921-1922 թվականներին, որը հայտնի է «Նեմեսիս» հունական դիցաբանության վրեժխնդրության աստվածուհու անունով: Նրա անդամներն էին՝ Սողոմոն Թեղեղյանը, Արշավիր Շիրակյանը, Արամ Երկանյանը, Միսաք Թոռլաքյանը, Արտաշես Գևորգյանը և ուրիշներ:

¹ Աղասի Եսայան, Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, Երևան, 1965., էջ 107:

² Տես, Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 14:

³ Ա. Շիրակյան. նշվ. աշխ. էջ 74-75:

⁴ Ջոն Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Երևան, 1983, էջ 253:

Մուդրոսի զինադադարից հետո 1918 թ. նոյեմբերի 11-ին պաշտոնապես հայտարարվում է Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը: Հայաստանին «դաշնակից» Անտանտի երկրները Հայկական հարցը, որի բաղկացուցիչ մասն էր Արևմտյան Հայաստանում երիտթուրքերի իրականացրած ցեղասպանությունը, օգտագործեցին միայն իրենց նպատակներին հասնելու համար: Նրանք անմիջապես ծնկի բերեցին օսմանյան թուրքիային և տիրացան կայսրության սահմաններում գտնվող տարածքներին: 1919 թ. վերջին Պաղեստինում և Միջագետքում իշխում էր անգլիական մանդատը, հարավում՝ Սիրիայում և Կիլիկիայում, ֆրանսիական: Հարավարևմտյան Անատոլիան համարվում էր իտալական ազդեցության գոտի, իսկ Իզմիրի մարզը՝ Արևելյան Թրակիան, տրվում էր Հունաստանին¹: Աստիճանաբար իրենց իսկ խոստումներից սկսեցին մեկ առ մեկ հրաժարվել: Պատերազմում պարտված թուրքիայի բախտը բերեց, որովհետև նա այս անգամ էլ կանգուն էր մնալու դաշնակիցների կողմից Հայկական հարցի հանդեպ ցուցաբերած անտարբերության հետևանքով: 1919 թ. դեկտեմբերին Սիրիայում Ֆրանսիայի գլխավոր կոմիսար Գեորգ Պիկոն անջատ գործարքների մեջ էր մտնում քեմալականների հետ և հանդիպումներից մեկի ժամանակ Մ.Քեմալին ասում է. «Ֆրանսիան պաշտպանում է Օսմանյան պետության անկախությունը», և դուրս է բերելու իր զորքերը նշված տարածքներից (Կիլիկիայից) ու կոչ է անելու Անտանտի մյուս տերություններին՝ հետևելու իր օրինակին²:

Պատերազմի ավարտից հետո Անտանտի երկրները առանձին-առանձին պայմանագրեր ստորագրեցին պարտված երկրների՝ Գերմանիայի, Ավստրիայի, Բուլղարիայի, ապա Հունգարիայի հետ: Նմանատիպ մի պայմանագիր էլ ստորագրվեց Անտանտի տերությունների (Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի) ղեկավարների ու սուլթանական թուրքիայի հետ՝ 1920 թ. օգոստոսի 10-ին, Փարիզի Սևր կոչվող արվարձանում: Մինչև Սևրի պայմանագիրը ստորագրելը թուրքիայի խորքում արդեն ծավալվել էր «միլլի» ազգայնական շարժումը Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ: Համաձայն Մուդրոսի զինադադարի 5-րդ հոդվածի՝ անհապաղ պետք է զորացրվեր թուրքական բանակը, բացառությամբ այն զորքերի, որոնք անհրաժեշտ էին սահմանները և ներքին կարգը պահպանելու համար³: Հակառակ այդ և նմանատիպ այլ պահանջների՝ Մ.Քեմալը իր տրամադրության տակ եղած

¹ Էդիկ Ջոհրաբյան, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922 թ.թ. Երևան, 1979, էջ 14:

² Գ.Գալոյան, նշվ. աշխ., էջ 132:

³ Զ. Կիրակոսյան, Հայաստանը միջազգային դիվանագիտության և Սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Երևան 1972., էջ 538:

զենքերը բաժանում է բնակչությանը՝ դրանք չհանձնելով Անտանտի զորքերին¹: Տիրելով նախաձեռնությանը և չհանդիպելով դաշնակիցների դիմադրությանը՝ Քեմալը արագ կերպով 1919 թ. հուլիսի 23-ին երզրումում հրավիրեց «Թուրքիայի արևելյան վիլայեթների իրավունքների պաշտպանության կողմնակիցների» համագումար, որը ճանաչեց Մուստաֆա Քեմալին որպես թուրքական ազատագրական շարժման ղեկավար²: Փաստորեն երզրումի համագումարում Թուրքիայի կառավարության ֆունկցիաները դրվում էին Մ. Քեմալի վրա: Իսկ 1919թ. սեպտեմբերի 4- 11-ը Սվազում տեղի ունեցած համաթուրքական առաջին ազգային վեհաժողովում ընդունվեց հռչակագիր՝ Մ. Քեմալի գլխավորությամբ հավաքագրել ամբողջ ազգը՝ երկիրը փրկելու համար: Հռչակագրի 3-րդ կետում հատուկ ընդգծվում էր քեմալականների վճռականությունը՝ թույլ չտալու անկախ Հայաստանի ստեղծումը³: Դաշնակիցները փորձեցին որոշակիորեն ազդելու Մ. Քեմալի վրա, ընդհուպ խափանելու Սվազի կոնգրեսը, «բայց դրա համար ո՛չ զենք, ո՛չ էլ կամք ունեին»⁴, - գրում է Տիգրան Սահակյանը: Ֆրանսիացի սպա Բոյունոնը նույնիսկ ասել էր. «Եթե Մուստաֆա Քեմալ փաշան և համաժողովի անդամները թշնամաբար չեն գործի Անտանտի տերությունների դեմ, ապա պատճառ չկա համաժողովի գումարումն արգելելու»⁵: Տերությունները կարող էին հենց բնում խեղդել քեմալականների շարժումը, բայց, ցավոք, այդ քայլին չդիմեցին և անջատաբար փորձեցին իրենց կողմը գրավել քեմալականներին: Եվ հենց այս անտարբերությունն էր, որ հետագայում Հայաստանին մղեց դեպի խորհրդայնացում, և, կարծում եմ, տեղին է մեջբերել մեծանուն հայագետ Ն. Ադոնցի գնահատականը. «Սևրի ընդարձակ սրահներում դաշնակիցները ի զորու էին մեկընդմիջտ վերջ տալու հայկական ձգտմանը դեպի հյուսիս (իմա՝ Ռուսաստան-Ն.Ս.)՝ խարխլելով դրա պատմական հիմքերը: Սակայն նրանք ավելի լավ բան չմտածեցին, քան սեղմելու Հայաստանը մահմեդական պետությունների շրջանակի մեջ»⁶: Իսկ 1920թ. նոյեմբերի 27-ին «Նեշընլ» թերթը գրում է. «Դաշնակիցները սահմանափակվեցին այն բանով, որ ապահովեցին իրենց շահերը: Նրանք զավթեցին Սիրիան ու Միջագետքը և Հայաստանը թողեցին բախտի քմահաճույքին: Իսկ երբ նրանց խիղճը արթնացավ, իրենց պարտավորությունները Ազգերի լիգայի վրա գցեցին, Հայաստանին ստիպեցին դաշնակիցների կողմում կանգնելու, և նա հայտնվեց Ռուսաստանի և

¹ Տե՛ս, Տիգրան Սահակյան, Ցավալի պայմանագրեր, Երևան, 2007., էջ 191:

² Տե՛ս, Գ. Գալոյան, նշվ. աշխ., էջ 129:

³ Տե՛ս, նույն տեղում, էջ 130:

⁴ Տ.Սահակյան, նշվ. աշխ., էջ 197:

⁵ Նույն տեղում, էջ 197:

⁶ Ն.Ադոնց, Հայկական հարցի լուծման շուրջ, Երևան, 1989., էջ 32-33:

Թուրքիայի միջև»¹, Սիմոն Վրացյանի գնահատմամբ՝ բուլշևիկյան մուրձի և թուրքական սալի միջև: Բանն այն է, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո 1921թ. մարտի 16-ին Մոսկվայում ռուս և թուրք բանակցությունների սեղանի վրա դրվեց խորհրդայնացված Հայաստանի ճակատագիրը՝ առանց հայերի մասնակցության:

Այդ փաստը ինքնին խոսում է պայմանագրի անօրինականության մասին (խոսքը Մոսկվայի պայմանագրի մասին էր), քանի որ այն սպառնալիքի և ուժի պարտադրանքով կնքված պայմանագիր էր, որ «ըստ Ազգերի լիգայի 1919 թ. ընդունած կանոնադրության 20-րդ հոդվածի, արգելվում էր ուժի կամ ուժի կիրառման սպառնալիքի միջոցով պայմանագրերի պարտադրումը»²: Պայմանագրի համաձայն խորհրդային Ռուսաստանը թուրքական կողմում թողեց Կարսի մարզը, Սուրմալուի գավառը, Նախիջևանի մարզը դարձավ ինքնավար տարածք՝ Ադրբեջանի խնամակալության տակ: Իսկ 1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում ուժի և սպառնալիքի տակ այդ անօրինական պայմանագիրը համաձայնեցվեց և ստորագրվեց խորհրդային Հայաստանի կողմից:

Մոսկվայի բանակցություններին զուգահեռ ընթանում էր նաև Լոնդոնի խորհրդատուները, որը բացվեց 1921 թ. փետրվարի 26-ին: Այստեղ հարկ ենք համարում նշելու, որ թուրքական դիվանագիտությունը Լոնդոն էր ուղարկել պատվիրակության ղեկավար Բեքիր Սամի բեյին, իսկ Մոսկվա՝ պատվիրակության ղեկավարի տեղակալ Յուսուֆ Քեմալին: Պա նշանակում էր, որ Անգորան ավելի մեծ նշանակություն էր տալիս Լոնդոնի կոնֆերանսին, քան Մոսկվայի³: «Այսպեսով, թուրքերը ինքզինքնին կ'ապահովագրեին Մոսկուայի մէջ այն ամէնէն, ինչ որ կրնար սպառնալ Լոնտոնի մէջ»⁴: Լոնդոնում գտնվող մեր պատվիրակության անդամներ Պողոս Նուբար փաշան և Ավետիս Ահարոնյանը վեհաժողովին ներկայացրեցին և պահանջեցին Սևրի պայմանագրի անփոփոխ պահպանում: Իսկ քեմալականները եռանդուն աշխատանք էին տանում դաշնակից երկրների հետ՝ Սևրի պայմանագիրը ի չիք դարձնելու համար: Այսպես, 1921 թ. մարտի 4-ին Բեքիր Սամի բեյը Լոյդ Ջորջի հետ ունեցած տեսակցության ժամանակ հայտարարել էր, որ ազգայնական Թուրքիայի երազանքն է Բրիտանիայի հետ գալ համաձայնության, որովհետև երկու երկրների շահերը միևնույնն են⁵: Նա միաժամանակ գաղտնի բանակցություններ սկսեց Իտալիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչների հետ: Մինչև Լոնդոնի խորհրդատուների վերջանալը «ֆրանսիական արտաքին գործերու նախարար

¹ Երվանդ Սարգսյան, Ղավադի գործարք, Երևան, 1995., էջ 165:

² Տե՛ս Ա.Ասլանյան, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի համեմատական վերլուծության փորձ (<<ԳԱԱ. «Լրաբեր» իսսարակական գիտությունների 2005, թ. 1 էջ 180):

³ Տե՛ս, Արարատ Հակոբյան, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010., էջ 150:

⁴ Ալ.Խատիսյան, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բէյրութ, 1968., էջ 339:

⁵ Տես՝ Գ.Գալոյան, նշվ. աշխ., էջ 424:

Պրիանը եւ Թուրքիոյ արտաքին գործաւոր Բէքիր Սամի բէյը ստորագրեցին անջատ համաձայնութիւն մը, որով ֆրանսիացիք կը կրճատէին իրենց ազդեցութեան շրջանը Սուրիոյ մէջ՝ յօգուտ Թուրքիոյ եւ ատոր փոխարէն կը ստանային շարք մը արտօնութիւններ՝ այլ և այլ մենաշնորհներ ձեռք բերելու համար Կիլիկիոյ, Տիարպեքիի եւ Սեբաստիոյ մէջ»¹: Մի նմանատիպ պայմանագիր էլ ստորագրվեց 1921 թ. մարտի 12-ին Իտալիայի արտաքին գործերի նախարար կոմս Սֆորցայի և Բեքիր Սամի բէյի միջև, որով Իտալիան պարտավորվում էր վերջնական հաշտութիւն կնքելու միջոցին պաշտպանել թուրքերի բոլոր պահանջները, որ արդեն ուղղակի դավաճանություն էր Հայաստանի նկատմամբ²:

Թուրքական դիվանագիտությունը հասավ իր նպատակին. նա ոչ միայն չեզոքացրեց Սևրի պայմանագիրը, այլև հասավ այն բանին, որ տերությունները փոխեցին իրենց վերաբերմունքը հայ ժողովրդի և, առհասարակ, Հայկական հարցի նկատմամբ: 1921 թ. փետրվար-մարտ ամիսներին Լոնդոնում կայացած կոնֆերանսի ժամանակ Անտանտի պետությունները թուրք պատվիրակներին առաջարկեցին Թուրքիայի արևելյան նահանգներում հայկական «ազգային օջախ» ստեղծել, որը նույնպես մերժվում է: Այսպիսով, Հայկական հարցի փոխարեն առաջ քաշվեց Թուրքիայի անատոլիական մասում «Հայկական ազգային օջախ» հիմնելու գաղափարը: Փաստորեն, Սևրի պայմանագրի 88-93-րդ հոդվածներով նախատեսված ազատ և անկախ Հայաստանի Հանրապետությունը փոխարինվում է Ասիական Թուրքիայի տարածքում Հայկական Ազգային օջախ հիմնելու գաղափարով, և Հայկական հարցը ստացավ «Ազգային օջախ» ձևակերպումը: Այս ամենը իր էությամբ շատ նման էր 1878թ. հունիսին կայացած Բեռլինի կոնֆերանսում Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածին փոխարինված 61-րդ հոդվածին, որտեղ արևմտյան տերությունների խարդավանքների հետևանքով «Հայաստան» բառը փոխարինվում էր «Հայկական մարզեր» և «հայաբնակ վայրեր» բառակապակցություններով, այսինքն օսմանյան կողմը ազատվում է այդ երկրամասը հայերի հայրենիք ընդունելու նախորդ կոնֆերանսի (խոսքը Սան-Ստեֆանոյի մասին է) ձևակերպումից³: Պարզ դարձավ, որ Լոնդոնում թուրքերը լուրջ քայլեր էին կատարել Հայկական հարցի տապալման ուղղությամբ, և, վերջապես Արևելքում խաղաղություն հաստատելու կեղծ կարգախոսով Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան նախաձեռնեցին հրավիրել միջազգային խորհրդաժողով, որը բացվեց Լոզանում 1922թ. նոյեմբերի 20-ին և ընդհատումներով իր

¹ Ալ.Խատիսյան, նշվ.աշխ., էջ 342:

² Տե՛ս, նույն տեղում, էջ 343:

³ Տե՛ս, Է.Դանիելյան, Ա.Մելքոնյան, Հայոց պատմություն հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2008., էջ 238:

աշխատանքները ավարտեց 1923 թ. հունիսի 24-ին: Խորհրդաժողովին, բացի վերոհիշյալ երկրներից, մասնակցում էին նաև Ճապոնիան, Հունաստանը Հարավսլավիան, Ռումինիան և Թուրքիան, ԱՄՆ-ը մասնակցում էր միայն դիտորդի կարգավիճակով: Մ.Քենալը «թուրքական պատվիրակությանը հանձնարարել էր մերժելու Թուրքիայի տարածքում Հայկական օջախ ստեղծելու առաջարկի քննարկումը¹:

Լոզանում Հայկական երկու պատվիրակությունները՝ ազգային պատվիրակությունը (Գ.Նորատունկյան, Գ.Սինապյան) և «Հայաստանի Հանրապետության» պատվիրակությունը (Ա.Ահարոնյան և Ալ.Խատիսյան) հանդես եկան միասնաբար և աշխատեցին ստեղծել միջազգային բարենպաստ հասարակական կարծիք՝ հօգուտ Հայկական հարցի: Այստեղ ուշագրավ է, որ հայ պատվիրակները հանդիպումներ էին ունենում տարբեր երկրների ներկայացուցիչների հետ՝ օգնության ակնկալիքով: Բայց առավել ուշագրավ է Ալ.Խատիսյանի հանդիպումը Անգլիայի արտգործնախարար Լորդ Քերզոնի ներկայացուցիչ Վազինտարտի և քարտուղար Օսբորնի հետ, երբ առաջարկվում է Հայկական հարցը օրակարգ մտցնել Սևրի շրջանակներում, սակայն ստանում է հետևյալ պատասխանը. «Դաշնակիցները այսօր զուրկ են իրական միջոցներէ թուրքերու վրայ ազդեցութիւն գործադրելու համար: Հայերու պահանջները կենսական խնդիրներ չէն դաշնակիցներու համար, որոնք զբաղուած են աւելի նեղուցներու հարցով եւ միայն Հայկական հարցի համար դաշնակիցները հազիւ թէ խզեն յարաբերութիւնները Թուրքիոյ հետ»²: Իսկ «Հայկական օջախ» ստեղծելու մասին դաշնակից տերությունների ընդունած և Ազգերի լիգայի կողմից պաշտպանության արժանացած առաջարկը դեռ որոշ ժամանակ օրակարգից չհանվեց, բայց երբ Լոզանի խորհրդաժողովում արդեն ամրապնդվել էին քենալական թուրքերի միջազգային դիրքերը, ինչպես Սևրի պայմանագիրը, այնպես էլ «Հայկական օջախ» ստեղծելու առաջարկը վերջնականապես մերժվեցին: Եթե այն ժամանակ դաշնակիցները Թուրքիայի կործանման և Հայկական հարցի լուծման վերաբերյալ հուսադրող խոստումներ էին տալիս, այս անգամ բավարարվեցին միայն խորհուրդներ տալով: «Դաշնագրի պաշտպանները կը պնդեն, որ պետք է հաշտուիլ Թուրքիոյ հետ, որովհետև, կ'ըսեն, այժմ Մուստաֆա Քենալի վարչութիւնը ամբողջ երկրին մեջ հաստատված է արդար ու ազատամիտ վարչութիւն մը, որմէ չէն կարող հայերը ևս գոհ չլինել»³: Իսկ թե հայերը ինչից պետք է գոհ մնային, անհասկանալի էր:

¹ Գ.Գալոյան, նշվ.աշխ., էջ 490:

² Ալ.Խատիսյան, նշվ.աշխ., էջ 357:

³ Մ.Օզանեան, Պայքարը Լոզանի դաշնագրութեան դէմ, (Դրոշակ), 1926., թիվ 1-2, էջ 325:

Փաստորեն, «Լոզանի քոնֆերանսը առեւտուրի գրեհիկ շուկայ մըն է, որ «Հայկական հարցը» կոչուած ապրանքը ոչ մէկ հրապոյր կրնայ ներկայացնել հարուստ եւ հզօր գնողներու համար: Ինչ ալ ըլլայ սակայն, մէզի համար այժմ արդէն պարզ է, որ այս քոնֆերանսը անգամ մը եւս պիտի գամէ մեր մտքերուն մէջ այն անողոք ճշմարտութիւնը, թէ դիւանագիտական կանաչ սեղաններուն շուրջ չէ, որ պիտի լուծուի մեր արիւնոտ դատը, այլ բովանդակ հայ ժողովրդի կազմակերպուած ու զինուած պայքարով»¹: Վերջապէս Լոզանի պայմանագիրը (որը ստորագրվեց 1923 թ. հուլիսի 24-ին) արդյունքը եղավ այն բանի, որ «Բրիտանական կայսրութիւնը, Ֆրանսիան և Իտալիան աշխարհաքաղաքական լուրջ ձեռքբերումներ ունեցան Օսմանյան կայսրութիւնը վերացնելու և նրա նախկին տարածքների տերերը դառնալու շնորհիվ»²: Այստեղ Հայկական հարցը ստացավ մի նոր ձևակերպում՝ «Գաղթականության հարց», որը ժխտում էր Միացյալ Անկախ Հայաստան ունենալու փաստը: Այսինքն, եթէ 1915թ. երիտթուրքերի նշանաբանն էր «Չկա հայ, չկա Հայկական հարց», ապա Լոզանի կոնֆերանսով պարզ դարձավ, որ կան գաղթականներ, կա գաղթականության հարց: Եվ այստեղ միանգամայն ճիշտ էր մեծանուն հայագետ Ադոնցը «Նրանք (այսինքն դաշնակիցները) ավելի շատ ներողամտություն ցուցաբերեցին թուրքերի հանդեպ թուրքական հարցում, քան թուրքերը հայերի հանդեպ Հայկական հարցում»³:

Нвер Симонян, Армянский вопрос до и после геноцида-Хамидовская политика решить Армянский вопрос истреблением всего армянского народа передалась младотуркам, которые хотели создать Туранское государство. И кроме собственных счетов, Армения была единственным препятствием на этом пути, которое надо было преодолеть. Османская Турция, которая была в составе Тройственного союза, вначале двадцатого века осуществила армянский геноцид.

Младотурки не брали на себя ответственность за геноцид армян, а крупные державы проявили равнодушие по отношению к Армянскому вопросу и только лишь на этом фоне стали решать свои политические и территориальные вопросы.

¹ «Հայրենիք», Հայկական հարցը (նոր տարուան առթիւ), Բոստոն, 1923., հունվար, Ա տարի, թիւ 3, էջ 4:

² Տ.Սահակյան, նշվ. աշխ., էջ 458:

³ Ն.Ադոնց, նշվ. աշխ., էջ 87:

Nver Simonyan, The Armenian issue before and after the genocide - The Hamid policy of resolving the Armenian Issue by the depopulation of the whole Armenian people had been passed to the Young Turks who wanted to create the State of the Turan. Besides of their own interests, Armenia was the only obstacle on the way which had to be overcome. The Ottoman Turkey which was the part of the Tripartite Alliance exercised the Armenian genocide at the beginning of XX century.

The Young Turks did not take responsibility for the Armenian genocide, and the world powers showed indifference towards the Armenian issue and began to solve their political and territorial issues only on this background.

Նվեր Սիմոնյան – ԵՊՀ պատմության ֆակուլտետի շրջանավարտ, Տավուշի մարզի Կիրանց գյուղի Գ.Վարդանյանի անվան հիմնական դպրոցի պատմություն առարկայի ուսուցիչ: